



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑՄԱԸ

Քաղ. Երևան

9 մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի
Ա. Թունյանի

Քննության առնելով «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ն 21.02.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան՝ այնքանով, որքանով չի ապահովում վճռաբեկ բողոքը վերադարձնելիս բողոքում առկա բոլոր թերությունների մատնանշումը, և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այնքանով, որքանով, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանի կողմից չմատնանշված և կրկին ներկայացված բողոքում չվերացված թերությունները, ինչպես նաև այնքանով, որքանով վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը դիտվում է որպես բողոքում նշված հիմքով նույն գործով կայացված որոշում,

դիտվում են որպես բողոքն առանց քննության թողնելու հիմք, ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողը գտնում է, որ վճռաբեկ բողոքի պարագայում վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու հնարավորության օգտագործումը կախվածության մեջ է դրված ՀՀ վճռաբեկ դատարանի հայեցողությունից, և այդ հայեցողության կամայական դրսևորման դեմ բացակայում է արդյունավետ պաշտպանության որևէ միջոց: Նման պայմաններում, ի խախտումն վերոհիշյալ իրավակարգավորման տրամաբանության, վիճարկվող դրույթի կիրառումը թույլ է տալիս, որ բողոքի թերությունները խոչընդոտեն անձի՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքը:

Դիմողի կարծիքով՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով կայացված որոշում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ իրավական նշանակություն է տրվում բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանի որոշման առկայությանը կամ բացակայությանը: Բողոքում նշված հիմքով նույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման առկայության կամ բացակայության փաստը չի փոխվում կախված նրանից, թե արդյո՞ք կրկին ներկայացվող բողոքը բավարարում է բողոքին ներկայացվող պահանջները, թե՛ ոչ: Նման իրավակիրառ պրակտիկա ձևավորելով՝ արհեստականորեն առաջանում է իրավական արգելք՝ անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման գործընթացում:

3. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց.

դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով \$Սահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքի 31, 39 և 69-րդ հոդվածներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Առաջարկել՝ սույն գործը միավորել ՀՀ սահմանադրական դատարանի վարույթում գտնվող՝ նույն հարցի վերաբերյալ «Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին, որի դատաքննությունը նշանակված է 2017 թվականի ապրիլի 18-ին, ժամը 10.00-ին:

Նախագահող՝

Անդամներ՝

9 մարտի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-5